ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը՝	«Արդարության տուն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն
Հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Զորավար Անդրանիկի 129/3
Էլեկտրոնային փոստը՝	houseofjustice.org@gmail.com
Հեռախոսահամարը՝	+374 55 25 55 56
Պետական մարմնի անվանումը՝	ՀՀ արդարադատության նախարարություն
Ներկայացման ամսաթիվը՝	25.05.2026 թ.

1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝	
պետական գնումների ոլորտի մասնագետներ	
2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը:	
Ոչ	
3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝	
Այո	
4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):*	
Պատրաստ ենք մասնակցել հանրային քննարկումներին, ներկայացնել նախաձեռնություններ և համագործակցել: Ֆինանսավորմանը մասնակցություն նախատեսված չէ:	
5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝	
Ոլորտը՝	ՀՀ արդարադատության նախարարություն
Ծրագրի դասիչը և անվանումը՝	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
Միջոցառման դասիչը և անվանումը՝	1057-11001 Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում
6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝	

Դիտողություն	☑	Առաջարկություն	☐	Նոր նախաձեռնություն	☐

7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

Նպատակներ	☑	Ծառայության որակ	☑
Գերակայություններ	☑	Ծառայության մատչելիություն	☑
Շահառուների շրջանակ	☑	Ֆինանսական հաշվարկներ	☑
Սպառվող ռեսուրսներ	☑	Արդյունքային ցուցանիշներ	☑
Իրականացման եղանակներ	☑	Վերջնական արդյունքներ	☑
Նոր ծառայություններ	☑	Նոր տրանսֆորտներ	☑
Նոր կապիտալ ներդրումներ	☑	Արդյունավետություն	☑

Այլ՝ _____

8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝

Կազմակերպության առաջին առաջարկը վերաբերում է պետական գնումների ոլորտում մասնագետների վերապատրաստման և մասնագիտական պատրաստման պարբերական ծրագրերի կազմակերպմանը: Կազմակերպության գնահատմամբ՝ նման դասընթացների իրականացումը կնպաստի գնումների գործընթացների առավել թափանցիկ, արդյունավետ և ժամանակին իրականացմանը, տեխնիկական բնութագրերի ճիշտ ձևակերպմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և պետական գնումների ոլորտում միասնական մասնագիտական մոտեցումների ձևավորմանը:

Կարևորում ենք տեխնիկական բնութագրերի կազմման մեթոդաբանական ուղեցույցների ներդրման, նախնական փորձաքննության մեխանիզմների կիրառման, ինչպես նաև թվային գործիքների և ստանդարտացված ձևանմուշների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն մարդկային գործոնի ազդեցության նվազեցմանը և գնումների գործընթացների թափանցիկության բարձրացմանը:

Կազմակերպության երկրորդ առաջարկը վերաբերում է վերապատրաստված աշխատակիցների միջև ներհամակարգային գիտելիքների փոխանցման մեխանիզմի ներդրմանը: Առաջարկվում է ստեղծել համակարգ, որի շրջանակներում վերապատրաստում և ատեստավորում անցած աշխատակիցները պարբերաբար իրականացնեն ներքին ուսուցողական հանդիպումներ իրենց գործընկերների համար: Կազմակերպության կարծիքով՝ նման մոտեցումը հնարավորություն կտա ապահովել մասնագիտական գիտելիքների կայուն տարածում համակարգի ներսում, բարձրացնել աշխատակիցների ընդհանուր պատրաստվածության մակարդակը, նվազեցնել կրկնակի արտաքին վերապատրաստումների անհրաժեշտությունը և ձևավորել շարունակական մասնագիտական զարգացման մշակույթ:

Երրորդ առաջարկը վերաբերում էր պատասխանատու ստորաբաժանման կազմում նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող ածանց ներգրավման համար ֆինանսական միջոցներ հատկացնելուն, ինչը կնպաստի մասնագիտական հատուկ գիտելիքներ

պահանջող գնահատողական դիտողություններ ու կարծիքներ հայտնելուն, գնման առարկան հնարավորինս ճիշտ նկարագրելուն, ու ապրանքի, աշխատանքի և ծառայության հանձնման-ընդունման փուլում մասնագիտական եզրակացություն տրամադրելուն:

9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝

Առաջին և երկրորդ առաջարկները չեն ենթադրում լրացուցիչ բյուջետային բեռ, այլ ուղղված են արդեն նախատեսված միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործմանը:
Իսկ երրորդ առաջարկը նախատեսում է հավելյալ ֆինանսավորում:

Այս բոլոր քայլերի համակցված իրականացումը հնարավորություն կտա ոչ միայն լուծել առկա խնդիրը, այլ նաև երկարաժամկետ հեռանկարում ձևավորել ավելի արդյունավետ, թափանցիկ և մրցակցային պետական գնումների համակարգ, որը կծառայի հանրային շահին և կապահովի բյուջետային միջոցների նպատակային ու խնայող օգտագործումը:

Նման մոտեցումը հնարավորություն կտա՝
տարածել ձեռք բերված մասնագիտական փորձը այլ աշխատակիցների շրջանում,
բարձրացնել ընդհանուր աշխատունակության մակարդակը,
նպաստել շարունակական ուսուցման մշակույթի ձևավորմանը,
նվազեցնել լրացուցիչ վերապատրաստումների անհրաժեշտությունը և ծախսերը:

10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝

Այս համատեքստում առաջարկում ենք դիտարկել բյուջետային միջոցների մասնակի վերաբաշխման հնարավորություն հօգուտ աշխատակիցների՝ պետական գնումների ոլորտային մասնագիտական վերապատրաստման, որակավորման բարձրացման գործնական ուսուցման և մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերի:

11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝

#	Նկարագրություն	Գումար (ՀՀ դրամ)
1		
2		
3		
4		
	Ընդամենը՝	

12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:

Բացի պետական բյուջեից ֆինանսավորման, այլ ֆինանսավորում չի նախատեսվում: